

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/3**

ք. Երևան

20.07.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազկոմշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 2017 թ. նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում կատարվող աշխատանքների համար կատարման վերջնաժամկետ է սահմանվում 15.11.2017 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և՛ որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե Աշխատանքի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սույն պայմանագրի N 4.2 Հավելվածով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 118062000 (հարյուր տասնութ միլիոն վաթսուներկու հազար, այսուհետև՝ պայմանագրի ընդհանուր գումար) << դրամ, որից՝ 19677000 (տասնինը միլիոն վեց հարյուր յոթանասունյոթ հազար) << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից N 1.1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան՝ իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 78354555 (յոթանասունութ միլիոն երեք հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր հիսունհինգ) << դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), որից՝ 13059093 (տասներեք միլիոն հիսունինը հազար ինսուներեք) << դրամը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.1.2 Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով՝ վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար:

5.1.3 Պայմանագրային գումարից մինչև 23506000 (քսաներեք միլիոն հինգ հարյուր վեց հազար) << դրամը Պատվիրատուն՝ պայմանագրի կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթի առկայության դեպքում, փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է 2017թ. առկա ֆինանսական միջոցների շրջանակներում ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրային գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով՝ անկանխիկ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ

ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V_9S = V_9 / N_9 \times D_9S$ , որտեղ՝

$V_9$ -ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

$N_9$ -ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

$D_9S$ -ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

$V_9S$  - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի

հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 4.2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ ա տ վ ի թ ա տ ու՝

ՀՀ կառավարությանն առընթեր  
քաղաքաշինության պետական կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Կ 900011012474  
ՀՎՀՀ 02565827


### Կ ա պ ա լ ա ո ու՝

«ԳԱԶԿՈՄԵԻՆ» ՍՊԸ  
ք. Երևան, Նոր-Նորքի  
9-րդ գանգված, 20/53  
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ  
Հ/Կ 11500905218000  
ՀՎՀՀ 00843968

Աշխատակազմի ղեկավար՝



Տնօրեն՝



Մ. Միսակյան

Կ.Տ.

**ՕԱՎԱԼԱԹԵՐԹ**  
**ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի**  
**մշակույթի տան վերանորոգում**

NN	Աշխատանքի անվանումը	Մակերեսը միավոր	Միավոր	Միավորի արժեքը	Ընդամենը
1	3	4	5	6	7
	<b>Հարդարման և նորոգման աշխատանքներ</b>				
10	Շեփերի ներսի կողմի սվաղում գաջե շաղախով	մ <sup>2</sup>	120.0	5.582	669.840
11	Միջնորմների կառուցում 10սմ հաստ.	մ <sup>2</sup>	154.4	2.982	460.42
12	Մետաղական ճաղավանդակի իրականացում	տ	0.576	776.599	447.32
13	Մետաղական էլեմենտ-ների յուղաներկում լավ որակի	մ <sup>2</sup>	30.0	1.272	38.160
14	Աստիճանավանդակի փայտե բռնածողի փոխում	մ	30.0	1.336	40.080
15	Աստիճանների երեսապատում պրեսգրանիտե սալիկներով	մ <sup>2</sup>	30.0	13.175	395.250
16	Պատուհանագոգերի ցվիքների տեղադրում ցինկապատ քիթեղով 0.55մմ հաստ.	մ <sup>2</sup>	10.0	4.778	47.780
17	Ղրսի պատի շարում տուֆ քարով	մ <sup>3</sup>	1.8	22.612	40.702
18	Պատերի շարվածք սրբատաշ տուֆից	մ <sup>2</sup>	4.5	31.933	143.699
19	Աստիճանների երեսապատում պրեսգրանիտե սալիկներով	մ <sup>2</sup>	19.8	13.175	260.865
20	Կերամիկական սալիկներից շրիշակների տեղադրում h=10սմ	մ	120.0	0.973	116.7600
21	Գիպսային գծային էլեմենտների, մախազարդերի, ելուստների, փորվածքների և ռելիեֆային բարդ նկարների վերանորոգում	մ	15.0	6.048	90.720
	<b>Հատակներ</b>				
24	Ց/ավազե մախաշերտի կառուցում 3սմ հաստ. I հարկում	մ <sup>2</sup>	542.5	1.516	822.430
25	Ց/ավազե մախաշերտի կառուցում 3սմ հաստ. II և III հարկերում	մ <sup>2</sup>	430.4	2.261	973.134
26	Հատակների երեսապատում պրեսգրանիտե սալիկներով	մ <sup>2</sup>	177.35	13.175	2336.586
27	Մանրահատակի կառուցում	մ <sup>2</sup>	723.0	7.756	5607.588
28	Մանրահատակի հղկում և լաքապատում	մ <sup>2</sup>	723.0	1.729	1250.067
29	Հատակների երկշերտ ջրամեկուսացում ռուբերոիդով	մ <sup>2</sup>	14.50	6.743	97.774
30	Կերամիկական սալիկներից հատակի կառուցում	մ <sup>2</sup>	14.5	8.361	121.235
	<b>Ներքին հարդարման աշխատանքներ</b>				
31	Պատերի սվաղում ց/ավազե շաղախով	մ <sup>2</sup>	59.61	2.868	170.961
32	Պատերի երեսապատում հախճասալերով	մ <sup>2</sup>	59.61	8.066	480.814
33	Կախովի առաստաղի տեղադրում սան. հանգույցներում ՊՎՔ նյութից	մ <sup>2</sup>	16.83	8.292	139.554
34	Առաստաղի ներկում լատեքսով մախորոք ծեփամածկելով, լավ որակի	մ <sup>2</sup>	672.82	1.367	919.745
35	Պատերի ներկում լատեքսով մախորոք ծեփամածկելով	մ <sup>2</sup>	1566.56	1.221	1912.770
36	Բետոնե մախաշերտի կառուցում 10սմ հաստ.	մ <sup>2</sup>	1.00	4.069	4.069

37	Ց/ավազե նախաշերտի կառուցում 3սմ հաստ.	մ <sup>2</sup>	10.00	1.516	15.160
38	Նախանուտքի երեսապատում բազալտե սալիկներով	մ <sup>2</sup>	10.0	14.071	140.710
	Ապամոնտաժման աշխատանքներ				
18	Բետոնե աստիճանների քանդում	հատ	12.0	1.484	17.808
	Վերականգնման աշխատանքներ				
20	Պատերի սվաղում ց/ավազե շաղախով 1.5մ բարձր.	մ <sup>2</sup>	345.0	2.868	989.460
21	Պատերի և շեփերի սվաղում գաջե շաղախով լավ որակի	մ <sup>2</sup>	1901.0	2.356	4478.756
22	Առաստաղի սվաղում գաջե շաղախով լավ որակի	մ <sup>2</sup>	1095.0	2.817	3084.615
23	Դեծանների կողմասերի և պիլաստրների սվաղում գաջե շաղախով լավ որակի	մ <sup>2</sup>	318.0	2.817	895.806
24	Պատուհանագոգերի բետոնացում Բ15 բետոնով	մ <sup>3</sup>	2.8	99.101	277.483
25	Գաջե կառնիզի իրականացում 10սմ լայն.	մ <sup>2</sup>	21.8	35.808	780.614
26	Բետոնե հարթակների և աստիճանների կառուցում Բ20 բետոնից	մ <sup>3</sup>	14.4	49.531	713.246
27	Բուտաքարի լիցք հատակների տակ 0.7-0.9մ	մ <sup>3</sup>	251.0	11.503	2887.253
28	Խճի շերտի իրականացում հատակների տակ 120մմ	մ <sup>3</sup>	98.0	14.209	1392.482
29	Ամրանային ցանցի տեղադրում հատակի բետոնե շերտի մեջ	տ	1.465	423.998	621.157
30	Բետոնե հատակների իրականացում Բ20 բետոնով	մ <sup>3</sup>	66.0	39.087	2579.742
31	Բեմահարթակի կառուցում 70մմ տախտակից, շրիշակների հետ	մ <sup>2</sup>	97.5	15.387	1500.233
32	Փայտե կարկասի կառուցում բեմահարթակի տակ	մ <sup>3</sup>	7.8	238.497	1860.277
33	Բեմի ճակատային մաս, լամինատե վահանակներով	մ <sup>2</sup>	10.2	6.648	67.810
34	Փայտե էլեմենտների մշակում հակահրդեհային նյութով	մ <sup>3</sup>	14.63	13.894	203.269
35	Բեմահարթակի հղկում և լաքապատում	մ <sup>2</sup>	97.5	1.729	168.578
	Ամրացման աշխատանքներ				
	Միակողմանի շապիկ				
36	Անցքերի շաղափում Փ12, L=300մմ	հատ	736.2	0.204	150.185
40	Ուղղաձիգ ծողեր, ամրան Փ12 A500c	տ	0.3175	394.887	125.377
	Գ առանցքով պատի իրականացում				
57	Ե/բ միջնածողերի իրականացում Բ25 բետոնով	մ <sup>3</sup>	2.2	80.288	176.634
60	200մմ պեմզաբլոկներից պատի շար	մ <sup>3</sup>	1.4	23.872	33.421
61	Ամրան Փ12 A500c	տ	0.1812	394.887	71.554
62	Պատերի դատարկությունների բետոնացում Բ 20 դասի թեթև բետոնով	մ <sup>3</sup>	5.6	38.217	214.015
63	Պատի սվաղում գաջե շաղախով լավ որակի	մ <sup>2</sup>	49.7	2.356	117.093
	Աստիճանավանդակ 2-ի քանդում				
64	Բետոնե աստիճանների քանդում	100 հատ	0.27	149.693	40.417
65	Ե/բ հարթակների քանդում	մ <sup>3</sup>	1.10	27.365	30.102
66	Պողպատե N22 շվեյերների քանդում	տ	0.4704	93.800	44.124
68	Ուղղաձիգ լաստակներ	մ <sup>2</sup>	1126.0	0.954	1074.204
69	Շին. աղբի դուրս բերում, բարձում և տեղափոխում 7կմ	տ	352.0	2.409	847.968
	Տանիքային աշխատանքներ				
70	Հարթ թիթեղից տանիքի քանդում	մ <sup>2</sup>	1210.0	0.115	139.150
71	Փայտե կավարամածի և վահանակների ավելա-ցում մինչև 50% նոր նյութով	մ <sup>2</sup>	1130.0	0.903	1020.390
72	Ջրատարների կառուցում փայտամածի հետ միասին	մ	114.0	15.116	1723.224
73	Պրոֆիլավոր մուգ շագանակագույն թիթեղից ծածկի կառուցում	մ <sup>2</sup>	1130.0	6.227	7036.510
74	Գազաթի թիթեղ մուգ շագանակագույն	մ <sup>2</sup>	64.80	5.383	348.818
75	Չեղնահարկի պատուհանների կառուցում	հատ	4.0	65.024	260.096
76	Ջրատար ձագարների և խողովակների տեղադրում	կ-տ	8.0	44.026	352.208

Ուսիլիճի առաստաղի կառուցում					
77	Կախովի առաստաղի տեղադրում «Ամստրոնգ»	մ <sup>2</sup>	356.0	18.114	6448.58
78	Փայտե էլեմենտների մշակում հակահրդեհային նյութով	մ <sup>3</sup>	9.70	13.894	134.77
79	Գործիզման լաստակներ	մ <sup>2</sup>	356.0	1.575	560.70
Ե/բ կոնստրուկցիաներ					
80	Միաձույլ սալերի իրականացում P25 բետոնից	մ <sup>3</sup>	87.03	73.281	6377.645
81	Ամրան Փ12 A500c	տ	6.453	394.887	2548.285
82	Ե/բ հեծանների իրականացում P25 բետոնով	մ <sup>3</sup>	24.38	89.432	2180.352
85	Ցանց Փ6 Ac-I թջ. 150x150	տ	0.1408	403.541	56.819
86	Խարիսխ Փ10 A500c	տ	0.0186	402.190	7.481
87	Անցքերի շաղափում Փ9, L=150մմ	հատ	195.0	0.644	125.580
88	Անցքերի փակում պոլիմերցեմենտյա շաղախով	մ <sup>3</sup>	0.140	115.374	16.152
89	Ց/ավազե տորկրետ սվաղ 50մմ հաստ.	մ <sup>2</sup>	46.5	5.817	270.491
90	Խոռոչների բացում տուֆե պատերում	մ <sup>3</sup>	31.40	22.943	720.410
Ավ-2					
91	Բետոնե հարթակների և աստիճանների կառուցում P25 բետոնից	մ <sup>3</sup>	7.0	57.520	402.640
92	Ամրան Փ12 A500c	տ	0.3630	394.887	143.360
93	Ամրան Փ10 A500c	տ	0.2340	394.887	92.404
94	Խոռոչների բացում տուֆե պատերում	մ <sup>3</sup>	0.90	22.943	20.649
Թեքահարթակ					
95	Բետոնե աստիճանների քանդում	հատ	4.00	1.484	5.936
96	Բետոնե նախաշերտի քանդում	մ <sup>3</sup>	0.14	18.732	2.622
97	Խճի շերտի քանդում	մ <sup>3</sup>	0.14	1.367	0.191
98	Խճի շերտի իրականացում հատակների տակ 120մմ	մ <sup>3</sup>	0.17	14.209	2.416
99	Բետոնե նախաշերտի կառուցում 12սմ հաստ.	մ <sup>2</sup>	1.33	4.854	6.456
100	Ց/ավազե նախաշերտի կառուցում 3սմ հաստ.	մ <sup>2</sup>	1.4	1.516	2.122
Ջրամատակարարում					
1	Անցքերի բացում պատերի վրա 200x200մմ	տեղ	1.00	5.235	5.235
2	Անցքերի փակում ց/ավազե շաղախով, պատերի վրա	մ <sup>3</sup>	0.01	132.959	1.330
3	Անցքերի բացում առաստաղում և հատակում	տեղ	2.0	1.491	2.982
4	Անցքերի փակում ց/ավազե շաղախով, առաստաղում	մ <sup>3</sup>	0.01	106.224	1.062
5	Մետաղապլաստե խողովակի տեղադրում dy=50մմ, փորձարկումով	մ	2.0	3.757	7.514
6	Մետաղապլաստե խողովակի տեղադրում dy=32մմ, փորձարկումով	մ	0.5	2.306	1.153
7	Մետաղապլաստե խողովակի տեղադրում dy=25մմ, փորձարկումով	մ	20.0	2.552	51.040
8	Մետաղապլաստե խողովակի տեղադրում dy=20մմ, փորձարկումով	մ	15.0	2.982	44.730
9	Մետաղապլաստե խողովակի տեղադրում dy=15մմ, փորձարկումով	մ	7.0	3.046	21.322
10	Մետաղապլաստե ձևավոր մասերի տեղադրում	հատ	75.0	1.759	131.925
11	Մետաղական ձևավոր մասերի տեղադրում	տ	0.01	1668.199	16.682
12	Փ32 Արույրե փականի տեղադրում	հատ	1.0	6.847	6.847
13	Փ25 Արույրե փականի տեղադրում	հատ	2.0	4.973	9.946
14	Փ20 Արույրե փականի տեղադրում	հատ	5.0	4.072	20.360

15	Փ15 Արույրե փականի տեղադրում	հատ	8.0	4.792	38.336
16	Փ15 փականի տեղադրում եվրոպական	հատ	1.0	4.540	4.540
17	Փ32 լողանային փականի տեղադրում	հատ	1.0	6.847	6.847
18	Փ15 ջրածման ծորակների տեղադրում	հատ	4.0	4.792	19.168
19	ճկուն խողովակ զուգարանակոնքի տակառիկի համար Փ15մմ, 0,5մ եր	մ	6.0	0.389	2.334
20	Մետաղական ձևավոր մասերի տեղադրում	տ	0.015	1668.199	25.023
21	խողովակաշարի լվացում և ախտահանում	մ	15.0	0.081	1.215
22	1000լ տարողությամբ պոլիէթիլենային բաքի տեղադրում	հատ	1.0	132.746	132.746
23	Բաքի ջերմամեկուսացում հանքային բամբակով	մ <sup>3</sup>	1.2	37.708	45.250
24	Բաքի ջերմամեկուսիչ շերտի ծածկում ապակե գործվածքով	մ <sup>2</sup>	18.0	1.262	22.716
25	Բետոնի քանդում	մ <sup>3</sup>	0.12	18.732	2.248
26	Բետոնե շերտի վերականգնում Բ7,5 բետոնով	մ <sup>3</sup>	0.12	30.374	3.645
	<b>Ներքին հակահրդեհային ջրատար</b>				
27	Բետոնի քանդում	մ <sup>3</sup>	3.80	18.732	71.182
28	Բետոնե շերտի վերականգնում Բ7,5 բետոնով	մ <sup>3</sup>	3.80	30.374	115.421
29	Մետաղական խողովակի տեղադրում dy=57*3.5մմ	մ	90.0	2.680	241.200
30	Հակահրդեհային ծորակի տեղադրում Փ50մմ արկղի և կաշեփոկ հակահրդեհային խողովակների հետ	հատ	6.0	62.380	374.280
31	Անցքերի բացում առաստաղում և հատակում	տեղ	3.0	1.491	4.473
32	Անցքերի փակում ց/ավազե շաղախով, առաստաղում	մ <sup>3</sup>	0.10	106.224	10.622
33	Մետաղական ձևավոր մասերի տեղադրում	տ	0.018	1759.077	31.663
34	խողովակների փոշեզրկում	մ <sup>2</sup>	16.5	0.558	9.207
35	խողովակների յուղազրկում բենզինով	մ <sup>2</sup>	16.5	0.558	9.207
36	խողովակների նախաներկում	մ <sup>2</sup>	16.5	0.168	2.772
37	խողովակների ներկում յուղաներկով 2 անգամ	մ <sup>2</sup>	16.50	1.272	20.988
38	խողովակաշարի հիդրավլիկ փորձարկում	մ	90.0	0.089	8.010
	<b>Կոյուղի</b>				
39	Անցքերի բացում պատերի վրա 300x300մմ	տեղ	1.0	5.235	5.235
40	Անցքերի փակում ց/ավազե շաղախով, պատերի վրա	մ <sup>3</sup>	0.4	132.959	53.184
41	Անցքերի բացում առա-ստաղում և հատակում	տեղ	2.0	1.491	2.982
42	Անցքերի փակում ց/ավազե շաղախով, առաստաղում	մ <sup>3</sup>	0.02	106.224	2.124
43	Կոյուղու պոլիէթիլենային խողովակի մոնտաժում Փ110մմ	մ	15.0	1.944	29.160
44	Կոյուղու պոլիէթիլենային խողովակի մոնտաժում Փ50մմ	մ	10.0	1.251	12.510
45	Ջուգարանակոնքերի տեղադրում	հատ	4.0	29.700	118.800
46	Կերամիկական լվացարանի տեղադրում	հատ	4.0	19.629	78.516
47	Հոսակի տեղադրում Փ50մմ	հատ	2.0	2.007	4.014
48	Պոլիէթիլենային ձևավոր մասեր	հատ	24.0	0.462	11.088
49	Համակարգի փորձարկում	100մ	0.25	43.263	10.816

50	Բետոնի քանդում	մ <sup>3</sup>	0.8	18.732	14.986
51	Բետոնե շերտի վերականգնում Բ7,5 բետոնով	մ <sup>3</sup>	0.8	30.374	24.299
	<b>Ներքին ջեռուցում</b>				
1	4 շարք հարթ խողովակ $\Phi 108$ , L=3մ	զմ	6.0	4.596	27.576
2	Ալյումինե մարտկոցների տեղադրում	ԷԿՄ	176.12	18.531	3263.680
3	Փական կարգավորող վերևի $\Phi 15$ մմ	հատ	52.0	4.709	244.868
4	Փական կարգավորող ներքևի $\Phi 15$ մմ	հատ	52.0	4.435	230.620
5	Հորիզոնական օդահավաքիչ $\Phi 159$ մմ, L=355մմ	հատ	1.0	5.681	5.681
6	Դատարկման ծորանի տեղադրում $\Phi 25$ մմ	հատ	2.0	4.792	9.584
7	Պողպատյա սողնակային փական $\Phi 50$ մմ	հատ	6.0	8.038	48.228
8	Պողպատյա սողնակային փական $\Phi 25$ մմ	հատ	4.0	4.449	17.796
9	Եռաբաշխիչի տեղադրում խցանով $\Phi 20$ մմ	հատ	48.0	4.288	205.824
10	Պողպատյա էլ. եռակցված խողովակի մոնտաժում $\Phi 50$ մմ	մ	140.0	2.840	397.600
11	Պողպատյա էլ. եռակցված խողովակի մոնտաժում $\Phi 40$ մմ	մ	25.0	2.473	61.825
12	Պողպատյա էլ. եռակցված խողովակի մոնտաժում $\Phi 32$ մմ	մ	35.0	1.675	58.625
13	Պողպատյա էլ. եռակցված խողովակի մոնտաժում $\Phi 25$ մմ	մ	30.0	1.338	40.140
14	Պողպատյա էլ. եռակցված խողովակի մոնտաժում $\Phi 20$ մմ	մ	330.0	1.234	407.220
15	Ջեռուցիչի խցան	հատ	200.0	0.595	119.000
16	Ջեռուցիչի կախիչ	հատ	200.0	0.560	112.000
17	Խողովակաշարի հիդրավլիկ փորձարկում	մ	560.0	0.089	49.840
18	Խողովակների և ջեռուցման սարքերի փոշեզրկում	մ <sup>2</sup>	40.0	0.174	6.960
19	Խողովակների և ջեռուցման սարքերի յուղազրկում բենզինով	մ <sup>2</sup>	40.0	0.558	22.320
20	Խողովակների նախաներկում	մ <sup>2</sup>	40.0	0.168	6.720
21	Խողովակների ներկում յուղաներկով 2 անգամ	մ <sup>2</sup>	25.0	1.272	31.800
22	Խողովակների ներկում հակակոռոզիոն ներկով 2անգամ	մ <sup>2</sup>	40.0	0.255	10.200
23	Խողովակների մեկուսա-ցում ֆոլգայապատ ապակեգործվածքով 40մմ հաստ.	մ <sup>3</sup>	4.80	51.819	248.731
24	Անցքերի փակում ց/ավազե շաղախով, պատերի վրա	մ <sup>3</sup>	0.12	132.959	15.955
25	Անցքերի բացում առաստաղում և հատակում	տնդ	54.0	1.491	80.514
26	Անցքերի փակում ց/ավազե շաղախով, առաստաղում	մ <sup>3</sup>	0.38	106.224	40.365
	<b>Օդափոխություն</b>				
27	RP100-50/45-6D ցածր ճնշման օդամուղի տեղադրում N=2824վտ	հատ	1.0	68.964	68.964
28	Հակաանձրևային շերտափեղկ PZ100-50	հատ	1.0	60.506	60.506
29	LKS100-50/24 օժանդակ շարժաբերով օդային կափույրի տեղադրում	հատ	1.0	108.939	108.939
30	KF 3 գրպանային ներդիրով KFD 100-50 օդային գտիչի տեղադրում	հատ	1.0	66.125	66.125
31	SUMX80-6.3 խառնիչ հանգույցով ջրային օդատաքացուցիչի տեղադրում	հատ	1.0	129.725	129.725
32	DV100-50 մարկայի ճկուն ներդիրի տեղադրում	հատ	2.0	4.256	8.512
33	TKU100-50 ձայնախլացուցիչի տեղադրում	հատ	1.0	32.252	32.252
34	Դեֆլեկտորի տեղադրում $\Phi 630$	հատ	4.0	28.186	112.744
35	Կարգավորող ցանց P150 150x150 տեղադրում	հատ	5.0	2.263	11.315

36	Կարգավորող ցանց P400 400x400 տեղադրում	հատ	10.0	3.585	35.850
37	Ճարտարապետական ճաղավանդակի տեղադրում 600x600	հատ	2.0	6.805	13.610
38	3K00.000 200մմ տրամագծով կլոր գլխանոցի տեղադրում	հատ	5.0	4.156	20.780
39	0.7մմ հաստ. 900x400 ուղղանկյուն կտրվածքով օդատարի տեղադրում	մ <sup>2</sup>	46.8	5.248	245.606
40	0.5մմ հաստ. 160մմ տրամագծով ցինկապատ օդատարի տեղադրում	մ <sup>2</sup>	7.53	5.253	39.555
41	0.7մմ հաստ.800x500 ուղղանկյուն կտրվածքով օդատարի տեղադրում	մ <sup>2</sup>	7.80	5.248	40.934
<b>Դռներ և պատուհաններ</b>					
1	Մետաղապլաստե սպիտակ պատուհանի տեղադրում /բացվող/ 4+4մմ ապակեփաթեթով	մ <sup>2</sup>	31.61	32.744	1035.038
2	Մետաղապլաստե սպիտակ պատուհանի տեղադրում /չբացվող/ 4+4մմ ապակեփաթեթով	մ <sup>2</sup>	55.83	23.878	1333.109
3	Արտաքին մուտքի դռան բլոկ, բացվող, ջերմակամուրջով, 4+4մմ ապակեփաթեթով	մ <sup>2</sup>	4.70	61.152	287.414
4	Արտաքին մետաղապլաստե դռան բլոկ, բացվող, 4+4մմ ապակեփաթեթով	մ <sup>2</sup>	17.95	41.156	738.750
5	Արտաքին մետաղապլաստե դռան բլոկ, չբացվող, 4+4մմ ապակեփաթեթով	մ <sup>2</sup>	12.28	23.878	293.222
6	Ներքին մետաղապլաստե դռան բլոկ, բացվող, 1 տակ ապակիով	մ <sup>2</sup>	42.70	28.958	1236.507
7	Մետաղապլաստե սպիտակ պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայն.	մ <sup>2</sup>	16.12	11.361	183.139
8	Մետաղական դռների մաքրում մետաղ. խոզանակով	մ <sup>2</sup>	44.97	1.381	62.104
9	Մետաղական դռների փոշեզրկում	մ <sup>2</sup>	44.97	0.174	7.825
10	Մետաղական դռների յուղազրկում բենզինով	մ <sup>2</sup>	44.97	0.558	25.093
11	Մետաղական դռների նախաներկում	մ <sup>2</sup>	44.97	0.168	7.555
12	Մետաղական դռների ներկում յուղաներկով 2 անգամ	մ <sup>2</sup>	44.97	1.272	57.202
<b>Լուսավորություն</b>					
1	Լուսավորության վահանակ մուտքային 50Ա ավտոմատներով, I=6x16Ա միաբևեռ ավտոմատներով	100 հատ	0.01	1641.966	16.420
2	Լուսավորության վահանակ մուտքային 50Ա ավտոմատներով, I=8x16Ա միաբևեռ ավտոմատներով	100 հատ	0.01	1958.207	19.582
3	Լուսատու յուրինեցենտային 220Վ, 2x40	100 հատ	1.04	907.490	943.790
4	1x100տիպի շիկացման թելիկով լուսատուի տեղադրում	100 հատ	0.35	633.049	221.567
5	1x100տիպի շիկացման թելիկով արտաքին սյառի լուսատուի տեղադրում	100 հատ	0.1	691.736	69.174
6	Լուսատու Եվակուացիոն յուրինեցենտային լամպով 220Վ, 1x18Վտ	100 հատ	0.1	696.120	69.612
7	Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով, ՈՊՑ 3x2.5մմ <sup>2</sup>	100մ	15.5	77.629	1203.250
8	Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով, ՈՊՑ 1x2.5մմ <sup>2</sup>	100մ	3.0	48.893	146.679
9	Անջատիչ նորմալ տարբերակի, միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220Վ 6Ա	100հատ	0.18	134.755	24.256
10	Անջատիչ Երկակի խզիչով թաքնված լարանցման համար 220Վ 6Ա	100 հատ	0.3	199.696	59.909
11	Էլեկտրական երկբևեռ վարդակի տեղադրում թաքնված լարանցման համար 220Վ 6Ա	100հատ	0.41	119.677	49.068
12	Վարդակների և անջատիչների տուփ	հատ	89.0	0.097	8.633
13	Բաժանման տուփ	հատ	150	0.097	14.550
14	Ենթաթակապ	հատ	3800	0.065	247.000
15	Ակոսների բացում և փակում	100մ <sup>2</sup>	0.10	235.447	23.545
<b>Էլեկտրասարքավորումներ</b>					
16	Մուտքային վահան ВРУ1-21-10 տիպի	հատ	1.0	310.133	310.133

17	Բաժանիչ վահան ՈՒ-11-3059-21Y3	հատ	1.0	233.366	233.366
18	Հաղորդալար ՊՎ 1x16մմ <sup>2</sup> պղնձե ջիղերով ՊՎՔ մեկուսացումով	100մ	1.75	59.049	103.336
19	Հաղորդալար ՊՎ 1x10մմ <sup>2</sup> պղնձե ջիղերով ՊՎՔ մեկուսացումով	100մ	1.9	48.961	93.026
20	Պոլիէթիլենային խողովակ Ø32մմ	100մ	0.73	44.122	32.209
21	Երկաթակապ	հատ	180.0	0.057	10.260
22	Պողպատե շերտավոր թիթեղ 40x4մմ	մ	20.0	0.820	16.400
23	Պողպատե շերտավոր թիթեղ 25x4մմ	մ	20.0	0.608	12.160
24	Պողպատ անկյունային 50x50x4մմ, L-2.5մ 3 հատ	հատ	3.0	5.852	17.556
25	Խրամուզու հետլիցք ձեռքով և խտացում	մ <sup>3</sup>	2.5	3.197	7.993
26	Ակունների բացում և փակում	100մ <sup>2</sup>	0.1	206.178	20.618
<b>Մոնտաժ</b>					
1	Հրդեհային ազդանշանման համակենտրոնիչ 8 ճառագայթի	կ-տ	1.0	45.681	45.681
2	Ավտոմոմ սնուցման բլոկ	հատ	1.0	51.718	51.718
3	Հրդեհային ազդասարք ժխային, NCHM-601PC	հատ	30.0	2.059	61.770
4	Հրդեհային ազդասարք ձեռքի ИПР-55	հատ	2.0	2.059	4.118
5	Մալուխ պղնձե ջիղով, ծավալը 3x1 մմ <sup>2</sup> ВРГ	մ	25.0	1.479	36.975
6	Մալուխ CV4U	մ	440.0	1.479	650.760
7	Պոլիէթիլենային խողովակ Ø=20մմ	մ	440	0.493	216.920
8	Երկաթակապ	հատ	1100.0	0.065	71.500
9	Շչակ АСРԹ-10	հատ	2.00	3.932	7.864
10	Վահանակ 911-ին մախանալու համար TANDEM-2M	հատ	1.00	6.880	6.880
<b>Սարքավորումներ</b>					
14	Հրդեհային ազդանշանման համակենտրոնիչ 8 ճառագայթի	կ-տ	1.0	17.334	17.334
15	Ավտոմոմ սնուցման բլոկ	հատ	1.0	1.874	1.874
16	Հրդեհային ազդասարք ժխային, NCHM-601PC	հատ	30.0	2.027	60.810
17	Հրդեհային ազդասարք ձեռքի ИПР-55	հատ	2.0	2.197	4.394
18	Շչակ АСРԹ-10	հատ	2.0	12.016	24.032
19	Վահանակ 911-ին մախանալու համար TANDEM-2M	հատ	1.0	12.738	12.738
<b>Հիմքեր</b>					
1	Բնահողի քանդումը մեխանիզմով 0.4մ <sup>3</sup> 3-րդ կարգի	1000 մ <sup>3</sup>	0.08	592.025	47.362
2	Բետոնի նախապատրաստական շերտ 100մմ, B-7,5	մ <sup>3</sup>	2.16	30.374	65.608
3	Բուտարետոնի նախապատում, B-12,5	մ <sup>3</sup>	17.48	38.215	667.998
4	Հորիզոնական ջրամեկուսացում ց/ավազե շաղախով 30մմ, հեղուկ առանձնով	100մ <sup>2</sup>	0.13	209.055	27.177
5	Գրունտի հետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	15.0	1.076	16.140
6	Ավելորդ գրունտի և շինադրքի բարձում	մ <sup>3</sup>	65.0	0.723	46.995
7	Ավելորդ գրունտի և շինադրքի տեղափոխում 7կմ	տ	117.0	1.987	232.479
8	B-12,5 դասի բետոնե ժապավենածև հիմք	մ <sup>3</sup>	5.83	47.340	275.992
9	Բազալտե քրքատաչ քարերից պատի շար	մ <sup>2</sup>	14.0	52.194	730.716
10	Ուղղահիգ երկշերտ հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100մ <sup>2</sup>	0.53	114.476	60.672
11	Ե/Բ հիմնային հեծանի կառուցում B-15 բետոնից	մ <sup>3</sup>	5.19	71.679	372.014
12	Ամրան A-I	տ	0.154	403.541	62.145

13	Ամրան A-III	տ	0.1632	394.887	64.446
14	Ե/Բ մոնոլիտ հիմքի տեղադրում B-15 բետոնից (ՀՄ-1 սարք. հիմք)	մ <sup>3</sup>	2.63	56.753	149.260
15	Ամրան A-III	տ	0.012	394.891	4.739
	<b>Ծածկ, Պատեր և Կարկաս</b>				
16	Ե/բ միաձույլ միջուկների իրականացում B-15 բետոնից	մ <sup>3</sup>	2.5	90.280	225.700
17	Ամրան A-I	տ	0.0322	403.541	12.990
18	Ամրան A-III	տ	0.102	394.887	40.278
19	Եռակցված ցանցեր	տ	0.029	686.995	19.923
20	Միաձույլ Ե/բ ծածկի հեծանների իրականացում B-15 բետոնից	մ <sup>3</sup>	1.0	66.838	66.838
21	Ամրան A-I	տ	0.0308	403.541	12.429
22	Ամրան A-III	տ	0.098	394.887	38.699
23	Միաձույլ սալի բետոնացում B-15 բետոնից	մ <sup>3</sup>	0.21	64.345	13.512
24	Ամրան A-I	տ	0.006	403.541	2.421
25	Ե/Բ զոտու բետոնացում B-15 բետոնից	մ <sup>3</sup>	7.0	63.918	447.426
26	Ամրան A-I	տ	0.1804	403.541	72.799
27	Ամրան A-III	տ	0.1745	394.887	68.908
28	Ծածկի սալերի տեղադրում 1ՄԿ-43 12-6 AIII Թ-Ս, 1ՄԿ-43 10-6 AIII Թ-Ս	հատ	4.0	67.626	270.504
29	Պատերի շարվածք ուղիղ ձևի տուֆ քարից	մ <sup>3</sup>	33.3	22.612	752.980
30	Պատերի ամրանավորում ամրանային ցանցից	տ	0.017	473.166	8.044
31	Ամրան A-I	տ	0.0067	403.541	2.712
32	Ամրան A-III	տ	0.0102	394.887	4.028
33	Բետոնի շերտի իրականացում B-15 բետոնից	մ <sup>3</sup>	0.65	40.041	26.027
	<b>Շխնկույզ</b>				
34	III կարգի գրունտի մշակում ձեռքով	100մ <sup>3</sup>	0.04	257.422	11.069
35	Գրունտի հետլիցք ձեռքով	100մ <sup>3</sup>	1.00	1.076	1.076
36	Ավելորդ գրունտի և շինարքի բարձում և տեղափոխում 7կմ	տ	5.94	2.409	14.309
37	Բետոնի կախապատրաստական շերտ 10սմ, B-7,5	մ <sup>3</sup>	0.20	35.009	7.002
38	Շխնկույզի հիմքի բետոնացում B-12,5	մ <sup>3</sup>	1.40	55.071	77.099
39	Ամրան A-III	տ	0.0360	394.887	14.216
40	Ամրան A-I	տ	0.0202	403.541	8.135
41	Հեղյուս ժ=24մմ	տ	0.0248	1233.345	30.587
42	Շխնկույզի հիմքի մետ.բազալի տեղադրում	տ	0.099	749.587	74.209
43	Ցեմենտե մածիկի իրականացում ժ=30մմ	100մ <sup>2</sup>	0.0065	238.890	1.553
44	Ուղղաձիգ երկշերտ հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100մ <sup>2</sup>	0.072	109.558	7.888
45	Մետաղական ծխնելույզի մոնտաժում մետաղական անկյունափակների ամրացումով Ø273*8մմ	տ	0.4975	640.390	318.594
46	Փողի արտաքին մակերեսի մաքրում մետաղե ավազով	մ <sup>2</sup>	11.0	6.741	74.151
47	Փողի արտաքին մակերեսի փոշեզրկում	մ <sup>2</sup>	11.0	0.174	1.914
48	Փողի արտաքին մակերեսի յուղազրկում բենզինով	100 մ <sup>2</sup>	0.11	55.780	6.136
49	Փողի արտաքին մակերեսի էմալապատում	100 մ <sup>2</sup>	0.11	54.162	5.958
50	Մետաղ. կոնստրուկցիաների և ներդիր դետալների նախաներկում	100 մ <sup>2</sup>	0.1	16.794	1.679
51	Մետաղ. կոնստրուկցիաների և ներդիր դետալների էմալապատում 2 շերտ	100 մ <sup>2</sup>	0.1	33.100	3.310
52	Շինարքի դուրս բերում,բարձում և տեղափոխում 7կմ	տ	9.7	2.409	23.367

	Տանիք				
53	Շածկի ջերմամեկուսացումը խարսով 120մմ	մ <sup>3</sup>	2.90	7.862	22.800
54	Շածկի գոլորշամեկուսացում մեկ շերտ ռուբերոիդով	100 մ <sup>2</sup>	0.24	244.967	58.792
55	Փայտե կոնստրուկցիաների տեղադրում	մ <sup>3</sup>	1.46	243.443	355.427
56	Տանիքի պատրաստում պրոֆիլավոր d=0.6մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով կավարամածի հետ միասին	100մ <sup>2</sup>	0.38	1056.655	401.529
57	Փոքր ծածկեր և միացման տեղեր ցինկ թիթեղից d=0.6մմ	100մ <sup>2</sup>	0.07	475.224	33.266
58	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ <sup>3</sup>	1.46	13.894	20.285
59	Տանիքի փայտյա կավարամածի հակահրդեհային պաշտպանություն	100մ <sup>2</sup>	0.38	45.048	17.118
	<b>Բացվածքներ</b>				
60	Փայտյա պատուհանի տեղադրում	100մ <sup>2</sup>	0.018	3816.572	68.698
61	Պատուհանների սպակեպատում	100մ <sup>2</sup>	0.018	597.597	10.757
62	Մետաղական դռան տեղադրում ֆռամուզով	100մ <sup>2</sup>	0.0405	3029.625	122.700
63	Պատուհանների և դռների սարքավորումներ	կ-տ	3.0	6.491	19.473
64	Ծխնի	հատ	4.0	0.519	2.076
65	Շափնդալետ	հատ	2.0	1.039	2.078
66	Փայտյա պատուհանի ներկում	100մ <sup>2</sup>	0.04	233.431	9.337
67	Մետաղական դռան ներկում	100մ <sup>2</sup>	0.0972	127.172	12.361
	<b>Հատակներ</b>				
68	Գրունտի տոփանումը խճով	100մ <sup>2</sup>	0.24	32.821	7.877
69	Հատակի նախապատ-րաստական շերտի բետոնացում B-7,5 d=120մմ	մ <sup>3</sup>	2.88	31.600	91.008
70	Ցեմենտե հարթ. շերտի իրականացում d=30մմ	100մ <sup>2</sup>	0.24	150.091	36.022
	<b>Հարդարման աշխատանքներ</b>				
71	Շենքի ճակատի սվաղում ց/ավազյա շաղախով	մ <sup>2</sup>	90.4	1.650	149.160
72	Շածկի վերնամասի սվաղում ց/ա շաղախով	մ <sup>2</sup>	30.0	1.911	57.330
73	Ներսի պատերի սվաղում ց/ավազյա շաղախով	100մ <sup>2</sup>	0.6	224.071	134.443
74	Պատի ջրաեմուլսիոն ներկում	100մ <sup>2</sup>	0.6	120.972	72.583
75	Առաստաղի ց/ա սվաղ	100մ <sup>2</sup>	0.24	229.115	54.988
76	Առաստաղի ներկում ջրաեմուլսիոն ներկով	100մ <sup>2</sup>	0.24	135.567	32.536
	<b>Սալվածք</b>				
77	Խճի նախապատրաստական շերտ 12սմ	մ <sup>2</sup>	24.17	1.477	35.699
78	Բետոնյա սալվածքի իրականացում 120մմ	մ <sup>2</sup>	24.17	6.474	156.477
79	ՄԲ շերտի իրականացում 4սմ	100մ <sup>2</sup>	0.25	316.913	79.228
80	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա	100 եզրաքար	0.31	693.901	215.109
	<b>Ջերմատեխնիկական մաս</b>				
1	Պողպատյա խողովակի տեղադրում Ø76x3.5	մ	29.0	4.261	123.569
2	Պողպատյա էլեռակցված խողովակի տեղադրում Ø57x3	մ	20.0	2.830	56.600
3	Պողպատյա էլեռակցված խողովակի տեղադրում Ø25	մ	18.0	1.338	24.084
4	Պողպատյա էլեռակցված խողովակի տեղադրում Ø20	մ	7.0	1.234	8.638
5	Համակարգի հիդրավլիկ փորձարկում	100մ	0.74	8.933	6.610
6	Պողպատյա սողնակային փականի տեղադրում dy-100մմ	հատ	5.0	29.485	147.425
7	Պողպատյա սողնակային փականի տեղադրում dy-50մմ	հատ	8.0	8.038	64.304
8	Փականի տեղադրում dy-25մմ	հատ	6.0	4.973	29.838
9	Փականի տեղադրում dy-20մմ	հատ	3.0	4.072	12.216

10	Հետադարձ փականի տեղադրում dy=80մմ	հատ	2.0	32.911	65.822
11	Հետադարձ փականի տեղադրում dy=25մմ	հատ	2.0	5.766	11.532
12	Ապահովիչ փականի տեղադրում dy=25մմ	հատ	2.0	6.228	12.456
13	Ջերմաչափի տեղադրում	հատ	3.0	5.012	15.036
14	Մանոմետրի տեղադրում	հատ	7.0	8.475	59.325
15	Խողովակների փոշեզրկում	մ <sup>2</sup>	8.9	0.174	1.549
16	Խողովակների յուղազրկում բենզինով	100մ <sup>2</sup>	1.0	55.780	55.780
17	Խողովակների նախաներկում	100մ <sup>2</sup>	0.089	16.794	1.495
18	Խողովակների ներկում հակակոռոզիոն ներկով 2 անգամ	100մ <sup>2</sup>	0.089	25.503	2.270
19	Խողովակների մեկուսացումը հանքային բամբակով	մ <sup>3</sup>	0.8	67.230	53.784
20	Մեկուսացված մակերեսի փաթաթում ապակե գործվածքով	100մ <sup>2</sup>	0.21	126.232	26.509
21	Խողովակների փոշեզրկում	մ <sup>2</sup>	2.5	0.174	0.435
22	Խողովակների յուղազրկում բենզինով	100մ <sup>2</sup>	0.025	55.780	1.395
23	Խողովակների նախաներկում	100մ <sup>2</sup>	0.025	16.794	0.420
24	Մառը խողովակների ներկում յուղաներկով 2 անգամ	100մ <sup>2</sup>	0.025	128.255	3.206
25	Ավտոմատացված ջրատաքացուցիչ կաթսա KB 01	կ-տ	2.0	758.486	1516.972
26	Գազային այրիչ 40-130կվտ	կ-տ	2.0	499.967	999.934
27	Պոմպ ցանցային HF 51A, N=0.75կվտ G=9.6մ <sup>3</sup> /ժ, H=16.5մ	կ-տ	2.0	139.906	279.812
28	Պոմպ սնուցման HF 50A, N=0.55կվտ G=3.0մ <sup>3</sup> /ժ, H=11.5մ	կ-տ	1.0	106.552	106.552
29	Ջրի մշակման էմալսեպան սարքի տեղադրում G=25.0մ <sup>3</sup> /ժ	կ-տ	1.0	94.914	94.914
30	Ճնշումային ընդարձակման բաքի տեղադրում, V=60լ	հատ	1.0	64.903	64.903
31	Կեղտազտիչի տեղադրում, dy=80մմ	հատ	1.0	13.675	13.675
32	Մետաղական լվացարանի տեղադրում	կ-տ	1.0	11.227	11.227
33	Մետաղական ծխատարի տեղադրում, dy=200	մ	6.0	16.163	96.978
34	Հոսակի տեղադրում Ø50մմ	հատ	1.0	2.007	2.007
35	Դեֆլեկտորի տեղադրում Ø-400	հատ	1.0	25.143	25.143
36	1000x300անշարժ ճաղավանդակների տեղադրում	հատ	1.0	7.428	7.428
37	Ապահովիչ փականի տեղադրում 150մմ	հատ	2.0	19.909	39.818
<b>Ներքին զագամատակարարում</b>					
1	Պողպատյա անկար խողովակի տեղադրում Ø108x4.0	մ	3.0	6.247	18.741
2	Պողպատյա անկար խողովակի տեղադրում Ø57x3.5	մ	10.0	3.402	34.020
3	Պողպատյա անկար խողովակի տեղադրում Ø38x2	մ	6.0	2.599	15.594
4	Պողպատյա անկար խողովակի տեղադրում Ø32x2	մ	7.0	1.532	10.724
5	Պողպատյա անկար խողովակի տեղադրում Ø25x2	մ	2.0	1.338	2.676
